

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

26 նոյեմբերի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 43 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Մելքումյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, տրանսպորտի վարչության պետ Ա. Ադամյանը, եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետ Գ. Հակոբյանը, ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա.Մարտիրոսյանը, Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գ.Բաղդասարյանը:

Քաղաքապետ Գ. Բեգլարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող փողոցը անվանակոչելու մասին:
3. Հայաստանի Երևան քաղաքի և Կանադայի Մոնրեալ քաղաքի միջև Փոխըմբռնման հուշագիրը հաստատելու մասին:
4. Երևան քաղաքի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2010թ. հունիսի 18-ի հ.116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2011թ. դրույքաչափերը սահմանելու մասին:
7. Երևան քաղաքի ավագանու 2010թ. հունիսի 18-ի հ.120-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիում վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
8. Գումար հատկացնելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու 2009թ. հուլիսի 6-ի հ.13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2009թ. նոյեմբերի 18-ի հ.37-Ն, 2010թ. մայիսի 7-ի հ.107-Ն որոշումներում փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին:
10. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
11. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքները հաստատելու մասին:
12. Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին:
13. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011թ. ծրագրի վերաբերյալ:
14. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 2010թ. նոյեմբերի 26-ի նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող փողոցը անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի Դավթաշեն կամրջի ուղեկապը Աշտարակի խճուղու ուղեկապին միացնող փողոցը անվանակոչել Արցախյան պատերազմի հերոս, «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար, զոհված ազատամարտիկ Սամվել ՊետրոսիԳևորգյանի անվամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Երևան քաղաքի և Կանադայի Սոնրեալ քաղաքի միջև փոխըմբռնման հուշագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել 2010թ. հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքի և Սոնրեալ քաղաքի միջև Փոխըմբռնման հուշագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունն աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական կազմակերպություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն մրցույթով գնում կատարելու ձևով ձեռքբերել աուդիտորական ծառայություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010թ. հունիսի 18-ի հ.116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանելու մասին» N 116-Ն որոշման հավելվածի 19-րդ և 20-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2011թ. դրույքաչափերը սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ս. Մարգարյանը և Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պ.Փլավչյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2011 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 75.000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 150.000 դրամ,

բբ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 250.000 դրամ,

բգ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 350.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

դ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

2) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 15.000 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի "ա" պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:

3) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 25.000 դրամ:

4) Երևան քաղաքի վարչական տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N 1 հավելվածի, (ինչպես նաև 2-րդ գոտիում ներառվում են 1-ին գոտիում ընդգրկված փողոցներին հարող բակային տարածքները):

• 3-րդ գոտում ընդգրկվում են սույն կետի հավելվածում չներառված մնացած փողոցներն ու տարածքները:

5) Երևան քաղաքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N 2 հավելվածի, (ինչպես նաև 2-րդ գոտիում ներառվում են 1-ին գոտիում ընդգրկված փողոցներին հարող բակային տարածքները):

• 3-րդ գոտում ընդգրկվում են սույն կետի հավելվածում չներառված մնացած փողոցներն ու տարածքները:

6) Երևան քաղաքի վարչական տարածքում՝

ա. բացօթյա առետուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 500 դրամ.

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առետուրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 350. 000 դրամ:

7) Երևան քաղաքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50.000 դրամ:

8) Երևան քաղաքի վարչական տարածքում՝ առետուրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առետուրի օբյեկտների համար՝ 87.500 դրամ.

բ. հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 175.000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 875.000 դրամ.

դ. խաղատների կազմակերպման համար՝ 1.750.000 դրամ.

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 875.000 դրամ.

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 262.000 դրամ:

9) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

10) Երևան քաղաքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչեւ 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

• Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2500 դրամ.

• Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2500 դրամ.

(Սյանիկյան պող.- 3500դրամ)

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3000 դրամ.
(Իսակովի պող., Էջմիածնի խճ., Չվարթնոց օդանավակայան-3500դրամ)
 - Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.
- բ. թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝
- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.
 - Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 3500 դրամ.
(Մյասնիկյան պող.- 6125դրամ)
 - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3500 դրամ.
(Իսակովի պող., Էջմիածնի խճ., Չվարթնոց օդանավակայան-6125դրամ)
 - Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 6125 դրամ.
- գ. այլ արտաքին գովազդի համար՝
- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2000 դրամ.
 - Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2000 դրամ.
(Մյասնիկյան պող.- 2625դրամ)
 - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 2200 դրամ.
(Իսակովի պող., Էջմիածնի խճ., Չվարթնոց օդանավակայան-2625դրամ)
 - Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2625 դրամ.
- դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 1225 դրամ.
- 11) Երևան քաղաքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
- 12) Երևան քաղաքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10.000 դրամ:
- 13) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարը սահմանվում է՝
- ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 1000 դրամ.
- բ. 501-ից -1500 քառակուսի մետր մակերեսի համար 500.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 500 դրամ: 1500 քառակուսի մետր մակերեսից սկսած 1.000.000 դրամ գումարած 1.500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:
- 14) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական վճարը սահմանվում է՝
- ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 դրամ.
- բ. 501-ից-1.500 քառակուսի մետր մակերես ունեցող հողամասի համար 250.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 250 դրամ: 1.500 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար 500.000 դրամ գումարած 1.500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:
- 15) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճարը սահմանվում է՝ յուրաքանչյուր մասնակցից 10.000 դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 29
դեմ – 7
ձեռնպահ – 7

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

7. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010թ. հունիսի 18-ի հ.120-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիում վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պ.Փլավյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Ա.Ադամյանը:

ՈՐՈՇՎԵՑ –1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին» N120-Ա որոշումը:

2.Սահմանել Երևան համայնքի կողմից Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոկանգառի գործունեություն իրականացնելու դեպքում մատուցվող ծառայության դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) մինչև մեկ ժամ, ինչպես նաև մեկ ժամից ավել կայանելու յուրաքանչյուր ժամի համար՝ 200 ՀՀ դրամ.

2)ժամը 24.00-ից (00.00-ից) մինչև 09.00-ն կայանելու համար՝ 500 ՀՀ դրամ՝ միանվագ վճարելու դեպքում.

3)30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 08.00-ից մինչև 20.00-ն կայանելու համար՝ 15000 ՀՀ դրամ (աբոնեմենտ).

4)30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 19.00-ից մինչև 09.00-ն կայանելու համար՝ 10000 ՀՀ դրամ(աբոնեմենտ).

5)30-օրյա ժամանակահատվածում՝ շուրջօրյա կայանելու համար՝ 20000 ՀՀ դրամ(աբոնեմենտ):

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ – Գումար հատկացնելու մասին

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի չորրորդ եռամսյակում հատկացնել մինչև 241,065.6 հազ. դրամ, որից.

1) 158,565.6 հազ. դրամ՝ Երևան քաղաքում սանիտարական մաքրում իրականացնող կազմակերպություններին փողոցների և մայթերի սանիտարական մաքրման (ձյան մաքրման) մեքենա-մեխանիզմներով ապահովելու նպատակով «Երևան» հիմնադրամին օժանդակություն տրամադրելու համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով,

2) 82,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2009թ. հուլիսի 6-ի հ.13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2009թ. նոյեմբերի 18-ի հ.37-Ն, 2010թ. մայիսի 7-ի հ.107-Ն որոշումներում փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N13-Ա որոշումը:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն և 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N107-Ն որոշումների 1-ին կետերից հանել ««Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N13-Ա որոշմամբ սահմանված» բառերը:

3. Սահմանել՝

1) Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտին (քարտեզի տեսքով)՝ համաձայն N1 հավելվածի:

2) Երևան քաղաքի քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին (քարտեզի տեսքով)՝ համաձայն N2 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ – Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն՝

1) սեփականության իրավունքով Ռազմիկ Հովակիմյանին պատկանող Երևանի Հովսեփյան փողոց 10 հասցեի թիվ 7 հողմասի (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.11.2003թ. հ.1656775 վկայական) 22.0քմ մակերեսով հատվածը նույն հասցեի հարևանությամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 22.0քմ մակերեսով հողամասի ,

2) սեփականության իրավունքով Լաուրա Պետրոսյանին պատկանող Երևանի Մյասնիկյան պողոտա թիվ 5/7 հասցեի (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.11.2005թ. հ.2112116 վկայական) հողամասի 738.9քմ մակերեսներով հատվածը նույն հասցեի հարևանությամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 738.9քմ մակերեսով հողամասի,

3) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Դրոյի փողոցին հարող տարածքում գտնվող 284.0 քմ հողամասը (տարածագնահատման 7-րդ գոտի) Երևանի Ա.Ահարոնյան փող. հ12/4 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Ժենիկ Չախալյանին պատկանող 120.0 քմ մակերեսով (տարածագնահատման 5-րդ գոտի)(Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.12.2007թ. հ.2515995 վկայական) հողամասի,

4) սեփականության իրավունքով «Ֆինստրոյ-Արտհաուզ» ՍՊԸ-ին պատկանող Երևանի «Ձորագյուղ» ազգագրական թաղամաս հ. 21/1 և «Ձորագյուղ» ազգագրական թաղամաս 1-ին փողոց հ. 21/2 հասցեներում (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման 16.07.2010թ. հ. 2674563 և 23.11.2009թ. հ. 2549065 վկայականներ) «Ձորագյուղ» ազգագրական թաղամաս հ. 21/1 հասցեով 1154.0քմ. մակերեսով հողամասից 24.3քմ. մակերեսով հողատարածքը, 1154.0քմ. մակերեսով հողամասին կից նույն մակերեսով, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի և «Ձորագյուղ» ազգագրական թաղամաս 1-ին փողոց հ. 21/2 հասցեով, 400.0քմ. մակերեսով հողամասից 150.0քմ. մակերեսով հողատարածքը, 400.0քմ. մակերեսով հողամասին կից 108.0քմ. և 1154.0քմ. մակերեսով հողամասին կից 42.0քմ. մակերեսներով, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների հետ փոխանակելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2010 թվականի գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

12. ԼՍԵՑԻՆ – Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի վարչական շրջանների ղեկավարների կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն NN1-12 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի Նուբարաշեն թաղային համայնքի ավագանու 2007թվականի հոկտեմբերի 22-ի «Նուբարաշեն թաղային համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 32, Երևանի Նորք-Մարաշ համայնքի ավագանու 2005թվականի սեպտեմբերի 30-ի «Նորք-Մարաշ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 102, Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի ավագանու 2006թվականի դեկտեմբերի 22-ի «Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի ղեկավարին առընթեր խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի անհատական կազմին համաձայնություն տալու մասին» թիվ 11/12, Երևանի Էրեբունի համայնքի ավագանու 2008թվականի դեկտեմբերի 5-ի «Էրեբունի համայնքի խնամակալության մարմին՝ համայնքին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 7-Ա, Երևանի Արաբկիր թաղային համայնքի ավագանու 2008թվականի հոկտեմբերի 30-ի «Արաբկիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 07/04 –Ա որոշումները, Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ավագանու 2007թվականի ապրիլի 4-ի «Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ղեկավարի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու վերաբերյալ համաձայնություն տալու և Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ավագանու 11.12.06թ. Հ.301-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 80-Ա որոշման 1-ին կետը և Երևանի Շենգավիթ համայնքի ավագանու 2008թվականի հուլիսի 16-ի «Երևանի Շենգավիթ համայնքի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին» թիվ 44 որոշման 1-ին կետը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

13. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011թ. ծրագրի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գ.Գասպարյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011 թվականին առաջարկվող գույքի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2.Ընդունել ի գիտություն, որ.

- 1) հողամասերն օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» հ.286 որոշմանը համապատասխան.
- 2) հողամասերը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում մեկնարկային գինը որոշվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Համաձայնություն տալու մասին» հ.11-Ա որոշմամբ.
- 3) ինքնակամ կառույցների օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին» հ.12-Ա որոշման, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» հ.912-Ն որոշմանը համապատասխան.
- 4) քանդման ենթակա վթարային բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» հ.23-Ա և «Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» հ.24-Ա որոշումների, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» հ.172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 որոշումներին համապատասխան.

3. Սահմանել, որ.

- 1) 2011 թվականի ընթացքում Երևան քաղաքի սեփականություն համարվող օտարման ենթակա գույքի գնահատման, օտարման և օգտագործման տրամադրման ձևի ընտրության, աճուրդի և մրցույթի անցկացման, մեկնարկային գների պայմանների որոշման, գույքի օգտագործման և կառուցապատման վարձավճարների չափերի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրով.

- 2) Սույն ծրագրի մաս է կազմում նաև Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 55-Ն որոշամբ հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը:
- 3) Սույն ծրագրի իմաստով 2011 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում 2010 թվականի ծրագրում չընդգրկված և մինչև սույն ծրագրի ընդունվելը և (կամ) ծրագրի գործողության ընթացքում Երևան համայնքի անվամբ գրանցված գույքը, այդ թվում՝ Երևան համայնքի սեփականությանն անցած անժառանգ գույքը, դրա բաժինը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

14. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գ.Գասպարյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ –1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման 1-ին կետի 1-ին մասի «ա» և «բ» ենթակետերում համապատասխանաբար եկամուտների և ծախսերի գումարները նվազեցնել 384,600.8 հազ. դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» N 56-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 43
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետ Գ.Բեգլարյանը Երևանի ավագանու անդամներին առաջարկեց Երևանի ավագանու հաջորդ նիստը գումարել 2010 թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը